RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2024 թ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2024թ. 12 ամիսների Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

2024 թվականին «Արդշինբանկ» ՓԲԸ-ը ձեռք է բերել HSBC Հայաստան բանկի 100% բաժնետոմսերը: Բանկը վերանվանվել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ: Այս վերլուծության մեջ ներկայացված են «Արդշինբանկ» ՓԲԸ-ն համախմբված հաշվետվությունների տվյալները:

Զուտ շահույթ

- 2024թ. 12 ամիսների ընթացքում Հայաստանում գործող բոլոր բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **363 մլրդ ՀՀ դրամ**, ինչը **149 մլրդ ՀՀ դրամ** կամ **61%**-ով ավել է քան 2023 թվականի նույն ժամանակաշրջանում գրանցած արդյունքը:

- Ամենամեծ շահույթը արձանագրել է Արդշինբանկ-ը շուրջ **133 մլրդ ՀՀ դրամ:** Այս վերլուծության մեջ ներկայացված են «Արդշինբանկ» ՓԲԸ-ն համախմբված հաշվետվությունների տվյալները:

Բանկերի զուտ շահույթը - 2024 / 2023 (մլն ՀՀ դրամ)



ROAE

Բանկային համակարգի ROAE ցուցանիշը 2024 թվականի ընթացքում կազմել է **22,3% (2023՝ ROAE 16,5%)**:

- Ամենաբարձր ROAE գրանցել է Արդշինբանկը – **51.8%:**

TOP 10 - Զուտ շահույթ/ընդհանուր կապիտալ միջին հարաբերակցության (ROAE) համեմատական 2024/2023 թթ.



Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2024թ. աճել են **1,838 մլրդ ՀՀ դրամով, կամ 20%:**

- Առ 31.12.2024, ընդհանուր ակտիվները կազմել են **11.022 մլրդ ՀՀ դրամ:**

Բանկերի ընդհանուր ակտիվները - 31.12.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, ԱՄԻՈ ԲԱՆԿ, և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **61,5%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **46.5%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **20,9%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.24



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2024թ. ընթացքում աճել է **24,8%**-ով:
- Առ 31.12.2024 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **6,270 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **57%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 2024 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ ԱԿԲԱ ԲԱՆԿ, *ԱՄԻՈ ԲԱՆԿ,* եւ Ինեկոբանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **64%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ *ԱԿԲԱ ԲԱՆԿ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **48.9%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **20,9%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.24



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2024թ. ընթացքում աճել են **1,538 մլրդ ՀՀ դրամով,** կամ **20 %:**

- Առ 31.12.2024, ընդհանուր պարտավորությունները կազմել են **9.243 մլրդ ՀՀ**:

Բանկերի ընդհանուր պարտավորությունները - 31.12.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ ֆ ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2024թ. ընթացքում աճել են **918 մլրդ ՀՀ դրամով,** կամ **17%:**
- Առ 31.12.2024, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **6,431 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **70%:**

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ ֆ ավանդներ
- 31.12.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2024թ. ընթացքում **118 մլրդ ՀՀ դրամով,** կամ **30%-ով** և կազմել է առ 31.12.2024 շուրջ **508 մլրդ ՀՀ դրամ**:

- **18** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **13-ը**:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 31.12.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2024թ. ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **300 մլրդ ՀՀ դրամով**, կամ **20%** ու կազմել **1.779 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն - 31.12.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- Առ 31.12.2024թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **48%**-ը և հավասար է **845 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.12.2024 թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **50**%-ը և հավասար է **892 մլրդ ՀՀ դրամ:**
- Առ 31.12.2024 թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **2%**-ը և հավասար են **42 մլրդ ՀՀ դրամ:**

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.12.24



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am